

Ամփոփ ձեռով ներկայացուած Ապելի *անպայմանական հրամայականը*, փոխան *կանոնի* (անգլ.՝ Rule, գերմ.՝ Regel) կը միտի *անձնական կանոնի* (մաքսիմ), որով աւելի կը մօտենայ Կանտի *անպայմանական հրամայականին*:

Իսկ քննախօսութեան գործնական իրավիճակը նկատի առնելով, որքան ատեն որ իտեալական քննախօսութեան պայմանները չեն լրացուած, Ապել անհրաժեշտ կը նկատէ «լրացուցիչ սկզբունք» մը, որ նպատակաբանական կողմնորոշում ունի: Այլ խօսքով, իտեալ քննախօսութեան համար, պէտք է տեղի ունենան՝ «*նախապատրաստական աշխատանքներ՝ որքան կարելի են եւ ռազմավարական (Strategy) վերապահում ու վտանգի հաւանականութեան (Risk) գնահատում որքան անհրաժեշտ են*»: Այս իմաստով, Ապելի փափաքն է, որ իրավիճակին պատշաճ միջնորդութիւն մը թելադրուի՝ մասնակից կողմերուն միջեւ. մէկ կողմէն՝ ռազմավարականօրէն անվերապահ ու անկեղծ մասնակցի, իսկ միւս կողմէն՝ ռազմավարական առաջարկներ եւ սպառնալիքներ ներկայացնող մասնակցի միջեւ, միշտ նկատի ունենալով ռազմավարական վարմունքի մը բարոյականութիւնը եւ անոր համաձայնութեան կարողութիւնը: Ահա այս ձեռով կարելի է հասնիլ՝ քննախօսութեան իտեալ պայմաններուն, ուր զանազան գործնական փաստարկումներու կողքին, իրական համաձայնութեան մը կարելիութիւնը առկայ է՝ մասնակից հասարակութեան մէջ:



Քննախօսութեան բարոյագիտութեան հիմնաւորումը

Ինչպէս տեսանք, քննախօսութեան բարոյագիտութեան հիմնական գաղափարը կը կայանայ անոր բանական հաղորդակցութեան կառոյցին վրայ, իր քննախօսութեան („D“) եւ ընդհանրականացման („U“) սկզբունքներով:

Ապել, Կանտի օրինակին հետեւելով, կը հաստատէ, որ միայն փորձառութենէ անկախ, ի յառաջագունէ (a priori) հիմնաւորում մը, կրնայ բարոյական կանոններու հիմնաւորման պահանջքը լրացնել: Նաեւ յիշեցինք, որ մինչ Կանտ, իր տեսութեան հիմնաւորումը կը փնտռէ անհատի «զուտ բանականութեան» կառոյցներուն մէջ, Ապել եւ Հաբերմաս, իրենց տեսութեան հիմնաւորման համար կը վստահին՝ անհատներու միջեւ հաղորդակցութեան (Communication), որովհետեւ իրենց համար *հիմնաւորել* կը նշանակէ «*ուրիշներու հանդէպ հիմնաւորել*», որ կարելի է միայն՝ ուրիշներու հետ խօսոյթով, քննախօսութեամբ:

Քննախօսութեան բարոյագիտութեան տեսութիւնը, որպէս նպատակ կը հաստատէ երկու հետեւեալ գաղափարները.-

- **առաջին**, որ բանական հաղորդակցութիւնը, անհրաժեշտաբար, որոշ բարոյական սկզբունք պէտք է բովանդակէ. եւ